



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ԹԻՎ 8 ՀԵՌԱԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 25-րդ, 55-րդ կետերը, գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ պրոֆեսորադասախոսական կազմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) հոգաբարձուների խորհրդի անդամների՝ սահմանված կարգով առաջադրված, ստորև ներկայացվող թեկնածուների ընտրության արդյունքները և համաձայն կանոնադրության՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն.

1) Համալսարանի Հյուսվածաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆ. Կարմեն Թելմանի Սահակյան.

2) Համալսարանի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալսարանի գլխավոր բժիշկ, ուրոլոգիայի և անդրուրոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Արեն Յուրիի Բաբոյան.



- 3) Համալսարանի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի Անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի կլինիկայի ղեկավար, անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Իրինա Էդուարդի Մալխասյան.
- 4) Համալսարանի Կենսաքիմիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Միխայիլ Իոսիֆի Աղաջանով.
- 5)) Համալսարանի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի Ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկայի ղեկավար, սրտաբանության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Հմայակ Սոսի Սիսակյան.
- 6) Համալսարանի Մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Կարինե Հակոբի Թոխունց.
- 7) Համալսարանի Բժշկական գենետիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Թամարա Ֆադեյի Սարգսյան.
- 8) Համալսարանի Դեղագործության կառավարման ամբիոնի դոցենտ, «Հերացի» արհեստակցական կազմակերպության նախագահ, դ.գ.թ. Մարթա Հեկտորի Սիմոնյան:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՌԵԿՏՈՐ՝**

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ